

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի ղեկավարի 2014թ-ի

2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների

2014թ-ի դեկտեմբերի 25-ին Վերին Արտաշատ համայնքում տեղի ունեցավ հանրային լսում որը ղեկավարում էր՝

Համայնքի ղեկավար՝ Ա.Ղազարյանը

Քարտուղարում էր՝ Ա.Հակոբյանը

Մասնակցում էին՝ գյուղապետարանի աշխատողները, ավագանու անդամները, միջնակարգ դպրոցի, մանկապարտեզի, արվեստի դպրոցի, բուժամբուլատորիայի աշխատողները և համայնքի բնակիչները:

Լսեցին- Արարատի մարզի Վերին Արտաշատ համայնքի ղեկավարի հաշվետվությունը 2014թ-ի 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների մասին:

2014թ-ի 2-րդ կիսամյակում կատարվել է հետևյալ աշխատանքները՝

- 1.Համայնքի բնակիչներից ստացվել է 70 դիմում:
- 2.Կատարվել է բանավոր հարցումներ 315, որից համայնքի ղեկավարին 308,ավագանու 10:
- 3.Տրվել է բնակիչներին 560 տեղեկանքներ:
- 4.Միջնորդագիր 10
- 5.Բնութագիր 20
- 6.Ստացել ենք տարբեր կազմակերպություններից նամակներ, որոնք ժամանակին քննարկվել և սահմանված ժամկետում պատասխանվել են:

2014 թ-ի 2-րդ կիսամյակում համայնքի բյուջեի սեփական եկամուտները կազմել է՝ 31663,8 հազար դրամ, փաստացի գանձվել է 32828,0 հազար դրամ, որից՝

Հողի հարկ - պլան - 20393,4 հազար դրամ, փաստացի -20415,9 հազար դրամ, - 100.1%

Գույքահարկ- պլան- 9479,8 հազար դրամ, փաստացի - 10516,6 հազար դրամ, - 110.9%

Վարձավճար`-պլան - 1351,6 հազար դրամ, փաստացի - 135266 հազար դրամ, -100.1%

Տեղական տուրք`-պլան -439,0 հազար դրամ, փաստացի - 489,5հազար դրամ, -111.5%

Համայնքում իրականացվել է տնտեսական միջոցառումներ:

Տրվել է սոցիալապես անապահով 200 ընտանիքներին 4610.0 հազար դրամ օգնություն,

բուժման համար 270.0հազար դրամ օգնություն, ուսման համար 120.0 հազար դրամ օգնություն, հանգուցյալների 30 ընտանիքներին 1000.0 դրամ օգնություն:

Վ. Արտաշատի միջնակարգ դպրոցին 200.0 հազար դրամ:

<<Վետերանների միավորում >> հասարակական կազմակերպությանը 30.0 հազար դրամ օգնություն :

«Երկրապահ կամավորականների միությանը» 40.0հազար դրամ օգնություն:

«Սևան գյուղական մարզական ընկերությանը» 30.0 հազար դրամ:

«Արարատ 2001 » բարեգործական հասարակական կազմակերպությանը 400.0 հազար դրամ:

2-րդ կիսամյակում փոխվել են խմելու ջրի ջրագծերը 70%-ով:

Երկու նոր բնակեցված փողոցներում անցկացվել են խմելու ջրի նոր ջրագծեր:

Կատարվել է կոպճապատման և խճապատման աշխատանքներ:

Վերանորոգվել և անցկացվել է գյուղամիջյան լույսերը:

Վ. Արտաշատի համայնքի ղեկավար Ա. Ղազարյան

